Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3677

281·6
9--49

1873

2010

9-58

ԳԵՐ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻՆ

ՀԱՆԱԾ ՏԵՏՐԱԿԻՆ ՎՐԱՑ

ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Գեր. Խաչատուր Գաղ[illegible]

Ռ 2001

Յ. Կոյնի

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԻՏԱՅԸ ՀԱԳԻԳԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1873

281.6
9-49

51
28156
Գ-49
4057

ԳԵՐ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻՆ

ՀԱՆԱԾ ՏԵՏՐԱԿԻՆ ՎՐԱՅ

ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԷՏԱՅԸ ՀԱԳԸԳԷԹ ԼՐԱԳՐՈՅ

1873

30163-Հ-Հ
(137 40)
13320-50

ԳԵՐ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻՆ ՀԱՆԱԾ ՏԵՏՐԱԿԻՆ ՎՐԱՑ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Գեր. Գազանճեան Սուքիաս եպիսկոպոսը տարուոյս սկիզբը նոր տետրակ մը հանեց «Վերջնական պատասխան Արևելեայց առ Արևմտեայս» մակագրով կարդացինք և շատ զարմացանք, տեսնելով որ՝ ուղղափառ եմ ըսող եպիսկոպոս մը վոխանակ ուղղափառ ճշմարտութիւն քարոզելու, ոչ միայն կ'ելլէ և անոր հակառակը կը վարդապետէ. այլ նաև կը համարձակի մեծահռչակ նուիրական բնագիր մնալ խանգարելու։ Յիշեալ տետրակը երկու տարբեր եկեղեցեաց դոյութիւնն իրեն հիմն առնելով. ասոնց մէկը, զոր արեւելեան յատուկ եկեղեցի կ'անուանէ, հետևեալ կերպով կը սահմանադրէ։

Կերպաւորութեան մէջ զանազան, եկեղեցական բարեկարգութեան և կացութեան եղանակաւ տարբեր՝ յատուկ կազմութեամբ, կերպաւորութեամբ, օրինօք, և ծեսերէն ու աղարողութիւններէն աւելի ծանր եւ կենսական յատկութիւններով, անբռնաբարելի իրաւամբ, անլուծանելի անընդհատ սովորութեամբ, սեփական և իւր դոյութիւնը կազմող յատկութիւններով, սեփական բարեկարգութեամբ որ Արևելեան եկեղեցոյ ինքնութիւնն է, յատուկ նուիրապետութեամբ որ Արևելեան եկեղեցական վարչութիւնն է, սեփական դոյութեամբ և կացութեամբ, և այս ամեն յատկութիւններով Արևմտեան եկեղեցիէն զանազանեալ տարբեր և յատուկ եկեղեցի մի է, որ Արեւելեան կը կոչուի։ Եւ սա Արևելեան եկեղեցին կամ թէ Արևելեան ուղղափառները զՀռովմայ քահանայապետը միայն իբր Պապ և իբր ընդհանուր եկե-

ղեցւոյ Նախագահ կը ճանչնան և կպատուեն. անմիջական նուիրապետական գլուխ ճանչնալով իրենց Արևելեան Աթոռոց Պատրիարքները։ Թէ Պապերն ալ աս Պատրիարքական Աթոռոց իրաւունքները անարատ և անբռնաբարելի ճանչցեր են։ Եւ թէ աս իրաւունքները անեղծանելի են։ Թէ Արևմտեայց և Արևելեայց Հռովմայ Քահանայապետէն կախումը տարբեր է. և թէ այս տարբերութիւնը էական է։ Միակերպ կախումն պահանջելը Արևելեան եկեղեցւոյ բնաջինջ կորուստը և անոր գոյութեան սեփական յատկութեանցը, նուիրապետութեանը և իւր յատուկ եկեղեցական բարեկարգութեանը ջնջումն պահանջել է ընդդէմ Աստուածային, եկեղեցական և մարդկային օրինաց։ Թէ ասիկայ մոլար պահանջողութիւն մի է։ Թէ այսպիսի դատումն մը յաւէտ նախապաշարումն կըլլայ, այնչափ աւելի սխալ և անհիմն. որչափ ստոյգ և իրաւացի է որ ուղղափառ Արևելքը միշտ ի սկզբանէ հետէ իր առանձին նուիրապետութեամբը, օրինօք և ձեւով կազմուած և վերոյիշեալ յատկութիւններով Արևմտեանէն տարբեր Արևելեան մի եկեղեցւոյ մը գոյութիւնը բոլորովին անհիմն է և անհեղեղ (absurde)։

Ա. Եկեղեցւոյ Արևելեան և Արևմտեան անուններն անգամ նոյն իսկ առաջին դարերուն մէջ անծանօթ էին, ևս առաւել ի սկզբան Եկե-

ղեցւոյ. վասն զի ոչ ինքն Յիսուս Քրիստոս, ոչ Առաքեալք և ոչ իսկ առաջին դարուց Հարք ասանկ զանազանութիւն մը կը յիշատակեն։

Բ. Նիկիոյ Տիեզերական ժողովն ալ չորրորդ դարուն սկիզբները ասանկ տարբեր արևելեան եկեղեցւոյ մը գաղափարն անգամ չիտար։

Գ. Վեցերորդ և եօթներորդ դարերուն ժողովոց մէջ թէպէտ յիշուած կը տեսնենք Արևելեան Հայրապետ, Արևելեան Եպիսկոպոս, Արևելեայց Եպիսկոպոսներ. բայց ոչ երբէք արևելեան յատուկ, տարբեր և զանազան եկեղեցի մը, ինչպէս կըստորագրէ զայն Գեր. Գաղանճեան։

Դ. Ստոյգ է որ՝ Փոտիոսեան և Կերուլարեան հերձուածոց ժամանակ՝ ծնաւ մէկ նոր արեւելեան եկեղեցի մը, իր գլուխը ունենալով Աղեքսանդրիոյ, Անտիոքայ, Երուսաղէմի և Կ. Պոլսի չորս Պատրիարքները, որոնցմէ մէկը՝ այսինքն Կ. Պոլսին ամենուն վրայ ընդհանուր վերատեսչութիւն մը անձին կը սեփհականէր. բայց աս ալ միայն Յունական եկեղեցիներէն կը բաղկանար, և ոչ բնաւ կը բովանդակէր բոլոր Արևելքը. ըստ որում արդէն Աստրոց, Քաղդէացւոց, Հայոց և Մարոնեաց Պատրիարքները աս չորս Աթոռներէն անկախ դիրք մը ստացած էին, և նոյն իսկ Յունական արևելեան եկեղեցին միշտ իբրև հերձուած մը նկատուեցաւ։

Ե. Ոչ երբէք եղած է արևելեան յատուկ եկեղեցի մը միակերպ ծէսով, արարողութեամբ,

կարգօք և սովորութեամբ։ Ասիկա իմանալու համար բաւական է աչք մը նետել Յունական, Ասորական, Բաղդէական, Հայկական, Մարոնական Եկեղեցեաց վրայ՝ և անմիջապէս կը տեսնուի անոնց իրարմէ ունեցած մեծ տարբերութիւնը։

Զ. Ոչ երբէք արևելեան յատուկ եկեղեցի ըսուածը ունեցեր է անմիջական նուիրապետական դլուխ մը և եկեղեցական վարչութիւն մը, անեղծանելի, անբառնալի, կենդանի են են իրաւամբք և յատկութեամբք տարբերեալ ի Բահանայապետէն Հռովմայ. վասն զի ինչպէս եկեղեցական պատմութիւնը մեզի յայտնապէս կը սորվեցնէ՝ ուրեմն անմիջական նուիրապետական իշխանութեան ներքեւ աթոռները ոչ երբէք միակերպ շարունակութիւն մը ունեցեր են, այլ ընդհակառակն բազում անգամ ենթակայ եղած են փոփոխութեան. մերթ ընդարձակուելով, մերթ չափաւորուելով, մերթ չիջանելով և ուրիշ նորեր ծագելով։ Ասիկա իմանալու համար՝ բաւական է յիշատակելը միայն, թէ մինչդեռ չորրորդ դարուն վերջերը՝ երկրորդ Տիեզերական ժողովքին մէջ հինգ գլխաւոր Աթոռ կը դտնենք Արևելքի մէջ. երկուքը առաջին կարգի, որք են Աղեքսանդրիոյն և Անտիոքայն. և երեքն երկրորդ կարգի, այսինքն Կեսարիոյն, Եփեսոսին և Հերակլիոյն. որոնց համար նոյն Սուրբ Ժողովքը կը սահմանէ որ՝ միայն իրենց սահմանները կառավարեն՝ մէկզմէկու չի խառնուելով։ Հազիւ վրան մէկ երկու դար ան-

ցած չանցած՝ աս կերպը մեծապէս փոխուած կը դտնենք։ Եւ փոխանակ ան յիշուած երեք երկրորդ կարգի Աթոռաց՝ մէկ նոր գլխաւոր Աթոռ մը եղած և աս երեքը իր մէջը ընկղմած, այն է Կ. Պոլսին. իսկ Անտիոքայ Աթոռը ամփոփուած և ուրիշ չորրորդ գլխաւոր Աթոռ մը եղած և դրեթէ նոյն ժամանակէն Անտիոքայ Աթոռը հետզհետէ քայքայելու սկսելով հինգ երկրորդական և մէկզմէկէ անկախ Աթոռներ եղած, և հետքէն ասոնք ալ իրենց մէջ դարձեալ բաժնուած կը դտնենք։ Անանկ որ հինգերորդ դարէն սկսեալ հետզհետէ կը դտնենք յարևելս նախ հինգ, ապա չորս, ապա մինչև անդամ տասը և շատ աւելի գլուխներ, այսինքն մէկզմէկէ անկախ, ըստ ժամանակին ընդարձակեալ և չափաւորեալ իրաւաբանութեամբ։

Արդ երբ աս փոփոխութեանց հետ միացնենք նաև վերը յիշուած ծիսից, արարողութեանց և սովորութեանց տարբերութիւնները, և նոյն իսկ բնաւորութեանց և վարմանց այլևայլութիւնը, ո՞ւր կրնայ ան ատեն Սուրբգիրքն մի արևելեան եկեղեցին, և անոր միակերպ անմիջական նուիրապետութիւնը։

Բայց թէ որ Գեր. Գաղանճեան Արևելեան և Արևմտեան բաժանման ինչէն յառաջ եկած ըլլալը կ'ուզէ իմանալ. գիտնայ որ անոր պատճառը Եկեղեցիէն դուրս ընտրելու է։ Արդ աս երկու յորջորջմանց ծագումը առանց երկուանայ յառաջ եկած է ան մեծ բաժանումէն՝ որ ունե-

ցաւ Հռովմէական ինքնակալութիւնը Մեծն Թէոդոսի մահուանէն ետեւ՝ անոր Արկադէոս և Ոնորիոս որդւոց ատեն, ճշդիւ հինգերորդ դարուն սկիզբը։ Այս ինքնակալութեան մէկը Արեւելից դաւառներէն կազմուած ըլլալով՝ Արեւելեան ինքնակալութիւն կը կոչուէր և միւսն Արեւմտից դաւառներով բաղկացեալ ըլլալով՝ Արեւմտեան ինքնակալութիւն կանուանէր. և ասկէց միայն յառաջ կուգար այն զանազանութիւնը յեկեղեցւոյ, որով Արեւելեան կայսերութեան սահմանին մէջ գտնուող Եկեղեցիք, Հայրապետք, Եպիսկոպոսունք և Հարք՝ նոյն յորջորջմամբը կանուանէին Արեւելեան կամ Արեւելից Հայրապետք Եկեղեցիք են։ Եւ Արեւմտեան կայսերութեան սահմանին մէջ գտնուողները նմանապէս նոյն յորջորջմամբ կը կոչուէին Արեւմտեան կամ Արեւմտից Հարք, Եպիսկոպոսունք են։ Այս թէ ոչ՝ Եկեղեցին իր ծագմանէն ի վեր և մինչև ցկատարած աշխարհի՝ միմիայն է թէ՝ ի վարդապետութեան հաւատոց, թէ՝ ի խորհուրդս, թէ՝ ի նուիրապետութեան են։ Եւ այս միակ Եկեղեցւոյ՝ միակ և անմիջական Նուիրապետն՝ Քրիստոսի միակ և ճշմարիտ Փոխանորդ է, որ է Հռովմայ Քահանայապետն։ Եկեղեցին 'ի բարեկարգութեան ալ միշտ և ընդամենայն տիեզերս միօրինակ եղած էր 'ի ըսկզբանէ և նոյնը պահուեցաւ ճշդիւ Քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ. և Արեւելքի մէջ գումարուած Տիեզերական ժողովոց նաև

բարեկարգութեան կանոնաց համեմատ կընթանային միօրինակ թէ՝ Արեւելից և թէ՝ Արեւմտից մէջ գտնուած Եկեղեցիք առհասարակ։ Իսկ տարբեր բարեկարգութեան սկզբն դրուեցաւ յամի 692. Տրուլեան կամ Դմբեթեան ըսուած ժողովքին մէջ (որ չէ ընդունուած յեկեղեցւոյ), և հերձուածոց ժամանակները առաւել ևս արմատացաւ և ընդարձակեցաւ՝ նաև շատ մը զեղծմունքներով և անկարգութեամբք։

Բայց այսու ամենայնիւ աս ալ ասոյդ է որ Արեւելից մէջ գտնուեցան Սկակիոսներ, Փոտիոսներ, Միքայէլ Կերուլարներ, որոնք ուզեցին իրօք Արեւելեան յատուկ և ուրոյն Եկեղեցի մը կազմել և յատուկ և ուրոյն աշխարհ մը հաստատել՝ տիեզերական պատրիարքութիւն անուանեալ, ասկայն գիտնայ Դեր, Գաղանճեան՝ որ ասիկա միշտ ապստամբութիւն մընէ Քրիստոսի Եկեղեցւոյն և նոյն Եկեղեցւոյ 'ի Քրիստոսէ կարգեալ Նուիրապետութեանը դէմ, օրինաւոր սեղանոյ դէմ՝ հակառակ սեղան կանգնել մընէ, յայտնի հերձուած մընէ, և վերջապէս հակառակ հաւատոյ՝ հերետիկոսական հայհոյութիւն մը։ Եւ ասոր համար իսկ դատապարտուեցան և մերժեցան յեկեղեցւոյ՝ նոյնին հեղինակները, և իրենց գործն ալ ցայսօր ժամանակի իբր ճշմարիտ հերձուած մը նշկատուած է և կը նկատուի, ևս և Դեր. Սուքիասէն և իր հետեւողներէն։

Աս ամեն ըսածներնէս ինքնին կը հետեւի որ՝

չկայ բնաւ յատուկ և ուրոյն արեւելեան ՝ի՞ եկեղեցի մը զանազանեալ յԱրեւմտեանէ։ Ա.դէ՛ ըսէ Գեր. Գաղանճեան թէ յորում կը կայանայ աս արեւելեան ըսած եկեղեցւոյն միօրինակութիւնը, երբ չունի միօրինակ ծէս, արարողութիւն, կարգ և սովորութիւն, և ոչ իսկ մի նուիրապետական դլուխ, այլ երբեմն հինգ, երբեմն չորս, երբեմն եօթն և աւելի դլուխներ՝ մէկը մէկալէն անկախ։

Սակայն դնենք թէ (ոչ երբէք ընդունելով ասանկ մոլար նախադասութիւն մը), դնենք թէ Գեր. Գաղանճեանին ստորագրութեանը համեմատ՝ դըտնուէր մէկ յատուկ արեւելեան եկեղեցի մը տարբեր յԱրեւմտեան Եկեղեցւոյ։ Կը հարցնենք իրեն թէ ան ատեն ո՞ւր կը մնար Եկեղեցւոյ միութիւնը, զոր ամեն օր կը դաւանինք հաւատամքին մէջ՝ ըսելով «Հաւատամք՝ի մի միայն... Եկեղեցի»։ Զոր և ինքն կընդունի դոնէ յեկեղ, ըսելով «Ուղղափառութիւնը մի միայն է իր էութեանը մէջ»։ Եթէ Ուղղափառութիւնը մի միայն է իր էութեանը մէջ. ուրեմն ի՞նչ է երկու եկեղեցեաց իրարմէ տարբերութիւնը։ Զէ թէ որ պատահական բաներու վրա կը կայանայ աս տարբերութիւնը, զանազանութիւնը, յատկութիւնը և երկոյութիւնը՝ անշուշտ աս պատահականները՝ չեն կրնար անբաժանելի, անլուծանելի, անեղծանելի, ծանր, կենսական, եւայլն, եւայլն բաներ ըլլալ։ և ոչ իսկ մոլար պահանջողներուն մը, և նոյն իսկ Ապոստոլական դէմ բռնաբարութիւն մը՝ անոնց փոխփոխութիւնը, այլայլութիւնը, ընդարձակութիւնը և

չափաւորութիւնն ու նաև բարձումը։ Ապա թէ ոչ՝ նոյն պատահական բաներն ալ էական կըլլային. յորմէ ինքնին սա հետեւութիւնը կելլէր որ. Ուղղափառութիւնը մի միայն է իր էութեան մէջ, և չէ մի միայն իր էութեան մէջ, կամ որ նոյն է տարբեր, զանազան և երկու։

Գեր. Գաղանճեան իր տետրակին առաջին երեսին մէջ ըսած «Ուղղափառութիւնը մի միայն է իր էութեանը մէջ» խօսքին՝ անշուշտ իբր մեկնութիւն կաւելցնէ յաջորդ երեսին մէջ թէ «Այս ըստոյգ է որ այս երկու եկեղեցիները մի են՝ ի հաւատս»։ Եթէ այս այսպէս է, ուրեմն ըստ իրեն՝ Եկեղեցւոյ միութիւնը՝ դէպի հաւատոյ միութեան վրա կը կայանայ, որ բոլորովին ընդդէմ է ուղղափառ հաւատոյ և վարդապետութեան։ Սակայն նոյն իսկ այս հաւատոյ միութիւնն ալ կը խանգարի, երբ քիչ մը յառաջ յիշուած ծանր ծանր յատկութիւններն կը բաժանեն երկու եկեղեցիքն՝ ի միմեանց. և երբ այս բաժանիչ յատկութիւններն ալ՝ որ ըստ ինքեան չափաւորելի, փոփոխելի և պատահական բաներ են Եկեղեցւոյ էութեան և հաւատոյ միութեան նկատմամբ, կը դառնան կըլլան ըստ Գեր. Գաղանճեանի անեղծանելի, անբաժանելի, անլուծանելի և յԱ.ոստոլական նշանոյ բաներ. անմիջապէս ասոնք ալ պատահականութենէ էականի փոխուելով՝ կը ջնջեն միութեան Եկեղեցւոյ նաև՝ ի հաւատս։ Որովհետեւ անհնար է որ՝ թէ՝ երկու եկեղեցեաց՝ ի հաւատս միութիւնը էական ըլլայ և թէ անոր հա-

կառակը այսինքն չմիութիւնը կամ երկոյութիւնը։

Դարձեալ՝ թէ որ այս երկու եկեղեցիները մի են 'ի հաւատս, և սա միութիւնը էական է. ուրեմն երկու եկեղեցեաց մէկը ինչ որ հաւատայ և դաւանի իբր վարդապետութիւն հաւատոյ (dogme), եւ ինչ որ հերքէ և դատապարտէ իբր հակառակ նոյն վարդապետութեան հաւատոյ, պէտք է որ միւսն ալ նոյնը յար և նման հաւատայ և դաւանի, և անոր հակառակը նոյն կերպով հերքէ և դատապարտէ. ապա թէ ոչ՝ թէպէտ և մէկ կէտի մը մէջ ալ միայն իրարմէ տարբերելու ըլլան 'ի հաւատս, կը վերցուի երկոցունց հաւատոյ միութիւնը, և հետեւաբար այս երկու եկեղեցիք չեն ըլլար մի 'ի հաւատս.

Գեր. Գաղանճեանը անշուշտ կընդունի եթէ Արեւմտեան Եկեղեցւոյ վարդապետութիւնը 'ի հաւատս՝ յամենայնի ուղիղ և ուղղափառական է. ապա թէ ոչ չէր կընար ըսել թէ «այս ատոյդ է որ այս երկու եկեղեցիները մի են 'ի հաւատս» եւայլն։ Հիմակ քննենք թէ իր Սուքիասեան արեւելեան եկեղեցին՝ ունի՞ արդեամբք և կը դաւանի՞ ան ամեն բանը զոր ունի և կը դաւանի Արեւմտեան Եկեղեցին։

Օրինակ իմն. Արեւմտեան Ուղղափառք իբր վարդապետութիւն հաւատոյ (dogme) կը հաւատան և կը դաւանին՝ թէ «Հռովմէական Եկեղեցին «ըստ կարգադրութեան Տեառն 'ի վերայ այլոցն ա- «մենեցուն ունի զիշխանութիւն կարգաւոր իրաւա- «բանութեան, և թէ սոյն այս իշխանութիւն իրաւա-

«բանութեան Քահանայապետին Հռովմայ՝ որ է ճըշ- «մարտիւ Եպիսկոպոսական՝ անմիջնորդական է, առ- «որ պարտականին որոյ և իցէ Ծիսի և Արժանապա- «տուութեան Հովիւք և հաւատացեալք եթէ իւրա- «քանչիւրն ուրոյն ուրոյն և եթէ ամենեքեան 'ի միասին պարտաւորութեամբ նուիրապետական ըս- «տորակարգութեան և ճշմարիտ հնազանդութեան, «ոչ միայն յիրս որք վերաբերին հաւատոց և բա- «րուց, այլ նաեւ յայնոսիկ՝ որք պատկանին բա- «րեկարգութեան և կառավարութեան Եկեղեցւոյ «ընդ համայն երկիր տարածելոյ. . . : Այս է կա- «թողիկէ ճշմարտութեան վարդապետութիւն՝ յոր- «մէ չէ հնար ումեք շեղիլ առանց կորուսանելոյ «զհաւատս և զփրկութիւն հոգւոց»։ Եւ հետեւաբար՝ կը հերքեն և կը դատապարտեն զանոնք ամենը՝ որոնք կըսեն թէ «Քահանայապետն Հռով- «մայ ունի միայն զպաշտօն վերատեսչութեան կամ «ուղղութեան, այլ ոչ զլիակատար և զդերագոյն «իշխանութիւն իրաւաբանութեան յընդհանուր Ե- «կեղեցին՝ ոչ միայն յիրս որք վերաբերին հաւա- «տոց և բարուց, այլ նաեւ յայնս որք պատկա- «նին բարեկարգութեան և կառավարութեան Եկե- «ղեցւոյ սփռելոյ ընդ համօրէն աշխարհ. կամ ու- «նի միայն զդլխաւորագոյն մասունս այլ ոչ զբո- «վանդակ լրութիւն այսր դերագոյն իշխանութեան, «կամ թէ սոյն այս իշխանութիւն նորա չիցէ կար- «դաւոր և անմիջնորդական թէ՛ ի վերայ ամենայն «և իւրաքանչիւր Եկեղեցեաց, թէ՛ 'ի վերայ ամե-

«նայն և իրաքանչիւր Հովուաց և հաւատացելոց։ «Անդեմա՛, նզովեալ եղիցի»։ (Ժող. Վատիկ. Նիսա. Դ. Գլ. Գ.)։ Կը հարցնենք Դեր. Գաղանճեանին. Հռովմայ Քահանայապետին գլխաւորութեանը վրայ՝ յար և նման ասա՞նկ է նաեւ իր արեւելեան եկեղեցւոյ դաւանութիւնը.

Եթէ արդարեւ անոնք ալ ըստ Արեւմըտեայց կը հաւատան և կը դաւանին. ապա ուրեմըն կը ստէ ինքը և 'ի զուր կը զրպարտէ Արեւելեան Ուղղափառները, թէ «Անոնց Հռովմայ Քահանայապետէն կախման եղանակը տարբեր է յԱրեւմտեան Ուղղափառաց, և թէ աս տարբերութիւնը էական է. թէ Արեւելեայք զՀռովմայ Քահանայապետը միայն իբր Պապ և իբր ընդհանուր Եկեղեցւոյ Նախագահ կը ճանչնան և կը պատուեն. Անոր Եպիսկոպոսական կամ ուրիշ որ և իցէ իշխանութեան ներքոյ չեն ընկներ. ինչու որ իրենց անմիջական նուիրապետական գլուխ կը ճանչնան իրենց Արեւելեան Աթոռոց Պատրիարքները»։ Վասն զի եթէ արեւելեան ուղղափառք ըսածները ստուգիւ մի են 'ի հաւատս ընդ Արեւմտեայց, առանց երկբայութեան այս իր բացատրածին համեմատ ոչ երբէք կըրնային մի ըլլալ 'ի հաւատս ընդ նոսա, և ոչ իսկ ուղղափառ. այլ որպէս զի իրօք մի ըլլան և ոչ խօսքով, կը պարտաւորին առանց ինչ զանազանութեան ասոնց (այսինքն Արեւմտեայց) հետ հաւատալ և դաւանիլ Հռովմայ Քահանայապետին իրաւասութիւնը վերը նշանակուած կերպով։ Ուստի կը պարտաւորին ճանչնալ, յարգել և դաւանիլ թէ Հռովմայ Քահանայապետը իշխանութիւն ունի ըստ պիտոյից Եկեղեցւոյ

նոյն և բարեկարգութեան օրէնքներ դնելու թէ՛ ընդհանրապէս բոլոր Եկեղեցւոյ վրա և թէ՛ 'ի մասնաւորի ամեն մէկ Եկեղեցւոյ վրա. թէ՛ ընդհանրապէս բոլոր Հովուաց և հաւատացելոց վրա և թէ՛ 'ի մասնաւորի ամեն մէկ Հովուի և հաւատացեալի վրա. ըլլայ Արեւմտեան Ծիսի՝ ըլլայ Արեւելեան Ծիսի, և ինչ և իցէ Արժանապատուութենէ որ ըլլայ։ Վասն զի 'ի Յիսուսէ Քրիստոսէ Հռովմայ Քահանայապետին աւանդուած է նոյն իրաւասութեան իշխանութիւնը, որ և թէ՛ կարգաւոր է, թէ՛ եպիսկոպոսական է և թէ՛ անմիջնորդական։ Դարձեալ՝ ինչպէս որ կը պարտաւորին ճանչնալ և դաւանիլ Անոր աս իշխանութիւնը, նոյնպէս կը պարտաւորին ընդունիլ և յարգել Անոր տուած բարեկարգութեան և եկեղեցական կառավարութեան վերաբերեալ օրէնքներն ու սահմանադրութիւնները ճշդիւ վերոգրեալ կերպով. վասն զի դարձեալ հաւատոյ վարդապետութիւն է որ՝ նոյն և բարեկարգութեան և եկեղեցւոյ կառավարութեան վերաբերեալ բաներուն մէջ «ճշմարիտ հնազանդութեան» կը պարտաւորին ամենայն Հովիւք և հաւատացեալք՝ թէ՛ ամենքը մէկ տեղ, թէ՛ ամեն մէկը զա՛տ զա՛տ առնելով որ և իցէ Ծեսէ (Արեւմըտեան՝ Արեւելեան, կամ Լատին՝ Յունական՝ Ասորական՝ Հայկական, եւայլն) և որ և իցէ Արժանապատուութենէ (Եպիսկոպոս, Մետրոպոլիտ, Նախագահ, Պատրիարք) որ ըլլան։

Զէ թէ որ արեւելեան ուղղափառք ըսած-

ները՝ սանկ չեն հաւատար, այլ ընդ հակառակը վերը յիշուած Սուքիասեան ձևին պէս կը հաւատան և կը դաւանին, թէ իրենց կախումը 'ի Քահանայապետէն Հռովմայ չէ յար և նման կախման Արևմտեայց, այլ տարբեր, և թէ սա տարբերութիւնը էական է են են. դարձեալ կը ստէ Գեր. Գաղանճեան երբոր կըսէ թէ «ուղղափառութիւնը մի միայն է իր էութեանը մէջ» և թէ «այս երկու (այսինքն արևմտեան և արևելեան) եկեղեցիները մի են 'ի հաւատս»։ Վասնզի ի՞նչպէս կրնան միահաւատ ըլլալ երկու եկեղեցիները առանց իրօք դաւանելու զմի և զնոյն հաւատս։ Եւ այսպէս ոչ միայն չկայ միութիւն հաւատոց Սուքիասեան արևելեան եկեղեցւոյն և Արևմտեայց մէջ, այլ կայ նաև էական տարբերութիւն։ Եւ այսպէս ինքը Գեր. Գաղանճեան և իր արևելեան ուղղափառք ըսածները՝ ճշմարիտ հաւատքով չեն հաւատար և չեն դաւանիր թէ «մի միայն է Քրիստոսի Եկեղեցին». թէպէտ և ամեն օր բերնուց սերտ ըրեր կը զրուցեն «Հաւատամք 'ի ՄԻ ՄԻԱՅՆ յԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ և յԱՌԱՔԵԼԱԿԱՆ Սուրբ Եկեղեցի»։ Եւ հետևաբար՝ իրեն և իրենցերուն վրայ՝ ոչ միայն երբոր հերձուածողութեան կեղտ մը, այլ երբոր նաև հերետիկոսութեան դատավճիռ ծնալ կը տրուի, չէ թէ յայտնի և անիրաւ զրպարտութիւն մը չըլլար. հապա նաև արդար և իրաւացի ճշմարտութիւն մը զրցուած կըլլայ։

Աւելի առաջ անցնինք.

Գեր. Գաղանճեան իր տեարակին զլխաւոր մէկ մասը՝ աս աւազի վրա հիմնեալ իր խարխուլ շէնքին նուիրելէն եաև, ուրիշներուդ երեսէն սկսեալ՝ անշուշտ նոյն անհիմն շէնքը ինչ և իցէ կերպով մը հաստատելու համար, պատկառելի անուն մը կը յիշէ։ Անուն մը՝ որ նոյն ընդ նոյն ընթերցողին ուշադրութիւնը կը դրաւէ։ «Բաւական է՝ կըսէ, յառաջ բերել Փլորենտեան մեծահռչակ սիւնհոդոսական դաշնադրութիւնը»։ Գեր. Գաղանճեան այսպիսի պատկառելի անուն մը յիշելով՝ առանց երկբայութեան ուղեր է անով տգէտ և անուսումն մարդոց աչքերը ներկել և իր մոլար սկզբունքները անոնց գիւրութեամբ կըլլեցնել։ Բայց կը հարցնենք իրեն, թէ ի՞նչ է արդեօք աս դաշնադրութիւն ըսածը և ո՞րպիսի վարդապետութիւն կը բովանդակէ իր մէջը։ Գեր. Սուքիաս կըզգուշանայ բուն բնագիրը մէջ բերելու. որովհետև աղէկ գիտէ ինքը որ՝ նոյն բնագիրը՝ առանց ձեռին հատեալ Դանիէլեան վէմին պէս՝ կը փշրէ և կը հոսէ իր շինած անճառնի ամբարտակը. այլ ժողովքին վճռէն բոլորովին դուրս և ինքնահնար դաշնադրական ձև մը յօրինելով՝ յանկարծ բնագրին մէջ տեղէն տող մը կ'առնու, բայց իրմէն խանգարեալ. ետքէն քանի մը տող ցատկելով, դարձեալ ուրիշ պարբերութիւն մընալ կը բերէ, նոյնպէս այլայլեալ. որպէս թէ ըստ Գեր. Գաղանճեանին նոյն ժողովքին վճիռը հետևեալ իմաստով յօրինուած ըլլար։

13320-00
40574
137
40

Փլորենտեան ժողովքին սիւնհոդոս սկան մեծահռչակ դաշնադրութեամբը փոխոխակի Պապը և Արեւելեան Պատրիարքունք մէկմէկու հետ կապուեցան ;

Արեւելեան Պատրիարքունք Պապին ընդհանուր եկեղեցւոյն վրայ գլխաւորութիւնը ճանչնալով և փոխադարձ Պապերն ալ Արեւելեան Պատրիարքական աթոռոց սեփական իրաւունքները անարատ և անբռնաբարելի ըլլալը ճանչնալով ։ (1)

«Ըստ այնմ տարազու՝ որպէս աւանդեալ է 'ի գործս տիեզերական ժողովոց և 'ի սուրբ կանոնս » ։

« Այսինքն անարատ պահուելով բոլոր արտօնութիւնները և իրաւունքները Արեւելեան Պատրիարքաց » ։

Ահա Սուրբն Յեր-զ կընծայէ Փլորենտեան ժողովոյն ։ Բայց ինքը այսչափովս ալ չի շատանալով՝ սոյն ինքնահնար ձեւոյն երկրորդ պարբերութեանը՝ (որ կըսկսի « Արեւելեան Պատրիարքունք » եւայլն) իբր լուսաբանութեան վրա կը բերէ . թէ « և այս ոչ եթէ Պապերուն կողմանէ զիջողութիւն մը ըլլալով , այլ ընդհանուր ժողովոց գործքերուն և եկեղեցական կանոնաց մէջ այսպէս աւանդուած ըլլալուն համար . ինչպէս նոյն Փլորենտեան ժողովը կը բացատրէ յետագայ խօսքերով « ըստ այնմ տարազու՝ որպէս եւայլն ։

Եթէ Փլորենտեան Տիեզերական ժողովքը յանկեան ուրեք գումարուած և անոր վճիռը անյայտ տեղեր պահուած ըլլար , թերեւս հարկ ըլլար ուրիշ վաւերական աղբիւրներու դիմել՝ անոր հա-

(1) Գեր. Գաղանճեանի տետրակին Գաղղիերէն թարգմանութեան մէջ՝ սոյն պարբերութիւնը ամբողջ կակերտով որոշուած է , որպէս թէ ժողովքին բուն իմաստն ըլլար . բայց թէ Հայերենի մէջ կակերտը ինչո՞ւ համար զանց եղեր է , մեզի անծանօթ է պատճառը ։

ղաստ իմացուածը երեւան հանելու համար ։ Բայց քարեբաղդաբար սոյն ժողովքը և իր վճիռը ոչ միայն հռչակուած է ամեն տեղ . այլ նաև իբր 250 տարիէ 'ի վեր Արեւելեան Ծեսերէն եղող բոլոր ուղղափառ եկեղեցականք գոնէ մէկմէկ անգամ զայն դաւանած են 'ի սուրբ աստիճանս վերանալու առեններն , ըստ ձեւոյն՝ զոր Ուրբանոս Ը . Հռովմայ Քահանայապետը սահմաներ է վասն Արեւելեայց . իսկ ինքը Գեր . Գաղանճեանն քանի մը անգամ տուեր է նոյն դաւանութիւնը .

Այսչափ յայտնի ըլլալով այս վճիռը՝ մեծ դիւրութեամբ կրնանք իր երեսը տալ ըրած այլայլութիւններն ու խանգարմունքները , կրճատածները և աւելցուցածները ։ Արդ՝

Ա . Նոյն վճռոյն Հռովմայ Քահանայապետին գլխաւորութեան վրա ըրած հաւատոյ վարդապետութիւնը կրճատեր և բոլորովին անյայտ ըներ է ։

Բ . Եւ անոր տեղ իր քովէն աւելցուցեր է դաշնադրական ձեւ մը ֆոֆոֆէ և ֆոֆոդոյ , որ բնաւ ամենեւին չկայ Փլորենտեան ժողովոյ վճռոյն մէջ ոչ անանկ բառ մը և ոչ իսկ անանկ իմաստ մը ։

Գ . Վճռէն առած առաջին պարբերութիւնը այլայլեր է , նախ ըստ բառից , այսինքն՝ փոխանակ դնելու ըստ բնագրին « որպէս նաեւ 'ի գործս Տիեզերական ժողովոց և 'ի սուրբ կանոնս բովանդակի » . խանգարմամբ ըներ է « ըստ այնմ տարազու՝ որպէս աւանդեալ է 'ի գործս Տիեզերական ժողովոց և 'ի սուրբ կանոնս » ։ Երկրորդ՝ այլայլեր է նաև ըստ իմաստին .

վան զի վճռոյն մէջ սոյն պարբերութիւնը աւելցուած է՝ի ցուցանել՝ թէ Հռովմայ Քահանայապետին ընդհանուր Եկեղեցւոյ վրա յԱստուածային իրաւանց ունեցած իշխանութեան յատկութիւնները՝ զոր մի առ մի կը յիշատակէ, նաեւ Փլորենտեանէն առաջ եղած Տիեզերական ժողովոց գործքերուն և սուրբ կանոնաց մէջ ալ բովանդակուած են. որ չունի բնաւ յարաբերութիւն մը նոյն վճռոյն աւարտը Պատրիարքաց կանոնական կարգին վրա ըսածին հետ. թէպէտ Գեր. Գազանճեան կ'ուզէ բռնաբար ձգել և անոր հետ միացնել՝ հակառակ հարազատ իմաստից բնագրոյն։

Դ. Ժողովքին վճիռը նախ՝ Հռովմայ Քահանայապետին յԱստուածուստ աւանդեալ ձիրքերը յիշատակելէն և նոյնը քիչ մը առաջ յիշատակուած «որպէս նաեւ» եւայլն՝ խօսքով ամբողջ վերջացնելէն եաեւ, կը նորոգէ ապա՝ նաեւ մեւս չորս՝ (այսինքն՝ Կ. Պոլսի, Աղեքսանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղէմի) Յարգելի Պատրիարքաց էնտիպոն էրէը, որոնց կը կցէ անմիջապէս «Պահմամբ՝ իմա՝ արտօնութեանցն ամենայնի և իրաւանց իւրեանց»։ Բնագրին այս մասն ալ բովանդակին ուրիշ ձեւի մը վերածուած է՝ այսպէս «այսինքն անարատ պահելով բոլոր իրաւունքները և արտօնութիւնները Արեւելեան Պատրիարքաց». Հոս ալ դարձեալ երկու խանդարմունք կայ բառից և իմաստին. ըստ առաջնոյն կ'աւելցնէ անորոշ բառ մը, «մինչ՝ որ միայն արտօնութեանց ածականն է, նաեւ էրաանց կ'ուզէ ստրա-

ծել, վերջապէս էշեռնոյը (այսինքն՝ յիշատակեալ չորից Պատրիարքաց) կը փոխէ և կընէ Արեւելեան Պատրիարքաց։ Ըստ երկրորդին՝ սոյն պարբերութիւնը տեղափոխելով՝ անանկ խօսքի մը կը կցէ որ՝ արդէն ըստ բառից, ըստ իմաստին և ըստ տեղւոյն այլայլեալ ըլլալով՝ ինչպէս վերը տեսանք. երկուքը մէկտեղ բոլորովին նոր իմաստ մը կ'առնուն՝ օտար ամենեւին բնագրոյն հարազատ իմացուածէն։

Ասանկ յայտնի սեղանակապութեամբ մը յիշեալ մեծահռչակ նուիրական վճիռը խարդախելուն համար՝ Գեր. Գազանճեան փոխանակ կարմրելու. առաւել ևս համարձակութեամբ կաղապակէ վերը յիշուած ինքնահնար ձեւէն անմիջապէս վերջը՝ այսպէս. Ուրեմն ինչ իրաւամբ Արեւելեան ուղղափառները պիտի զրպարտուին և վատահամբաւ պիտի ըլլան՝ երբոր ուրիշ բան չեն պաշտպաններ եթէ ոչ իրենց Պատրիարքական Աթոռոյ սոյն անեղծանելի իրաւունքները և սոյն սրբանուէր Փլորենտեան դաշնադրութիւնը ընդդէմ ամենայն զեղծմանց Հռովմայ արքունեաց։ Ամո՛թ ասղաֆոս եմ ըսող եպիսկոպոսի մը։ Դիտայ Գեր. Սուքիաս՝ որ Արեւելեան ճշմարիտ Ուղղափառք ոչ երբէք պաշտպաններ են և կամ պիտի պաշտպանեն իր ինքնահնար վարդապետութիւնը և մոլար սկզբունքները. և հետեւաբար անոնք չեն եղած վատահամբաւ, այլ ընդհակառակն իրենց պարտուց մէջ հաւատարիմ մնալնուն համար զովեալ և բարեհամբաւ են։ Միայն ինքը Սուքիաս և իրեն հետեւող սակաւաթիւ եկեղեցականք՝ Եկեղեցւոյ դէմ ապստամբելով

և իրենց պարտուցը անհաւատարիմ դանուելով՝ մերժեցան յեկեղեցւոյ և իրենք զիրենք վատահամբաւ ըրին առաջի աշխարհի։ Գիտնայ դարձեալ՝ որ Փլորենտեան սրբանուէր վճիռը (՝՛Չ ԲՈՂՆԱԳԻՐԸ՝՛, ասիկա հայհոյութիւն է.) Պատրիարքաց անեղծանելի էութեան մը չի առաւ, որովհետեւ Պատրիարքութիւնը եկեղեցական կարգումն մը ըլլալով, չէ և չի կրնար անեղծանելիութեան ենթակայ ըլլալ։ Հետեւաբար Պատրիարքութիւն, Նախագահութիւն, Մետրոպոլտութիւն իբրեւ եկեղեցական կարգումն, կրնան ըստ ժամանակին կերպ կերպ փոփոխութեանց ենթակայ ըլլալ. ինչպէս որ իրօք ալեղած են 'ի դարս դարս ըստ վկայութեան եկեղեցական պատմութեան։ Փլորենտեան Ժողովքին վճիռը միայն Հռովմայ Քահանայապետին, և Կ. Պոլսի, Աղեքսանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղեմի Պատրիարքայ վրա խօսելով՝ յայտնապէս կորոշէ և կը զանազանէ Առաջնոյն յԱստուածուստ կարգումը և Վերջնոց 'ի կանոնական իրաւանց յառաջ եկած ըլլալը։ Խօսքը կարճ ընելու համար՝ Փլորենտեան Տիեզերական Ժողովոյն Սինոդոսական վճռին՝ աստնիւթիս վրա եղած մասը ամբողջ թարգմանելով մէջ կը բերենք հոս, որոյ պայծառ լուսին առջեւը՝ ինքնին կը փարատի Դեր. Դաղանճեանին սփռած խաւարը։

Ս. հա բուն վճիռը.

« Եւդինէոս Եպիսկոպոս Ծառայ ծառայից
« Աստուծոյ 'ի յաւէրժական յիշատակ իրաց. հա-

« մաձայն դտանելով ստորեւ գրելոց Ս. մենասիրելոյ
« ւոյն 'ի Քրիստոս որդւոյ Մերոյ Յովհաննու Պալէո-
« լոգեայ Ինքնակալի Հռոմայ և Տեղակալաց Յարա-
« դելի Եղբարց Մերոց Պատրիարքաց եւայլն։

« Ուրախ լիցին երկինք և ցնծասցէ երկիր եւ-
« այլն։ Յանուն Ս. մենասուրբ Երրորդութեան Հօր
« և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, հաւանելով Սրբոյ Տես-
« ղերական Փլորենտեան Ժողովոյս սահմանեմք.
(հոս կը նշանակուին Հոգւոյն Սրբոյ բղխումն 'ի Հօրէ և Յորդւոյ, Բաւարանը եւայլն և կը հետեւի)։
« Սահմանեմք դարձեալ թէ Սուրբ Աթոռն Առաքե-
« լական և Հռովմէական Քահանայապետն ունի
« գերիշխանութիւն ընդ աշխարհ համօրէն, թէ նոյն
« ինքն Քահանայապետն Հռովմայ է Յաջորդ Երա-
« նելւոյն Պետրոսի Իշխանին Առաքելոյ և Փոխանորդ
« Քրիստոսի և համօրէն Եկեղեցւոյ Գլուխ և ամե-
« նայն Քրիստոնէից Հայր և Վարդապետ, և նմա
« յանձն Երանելւոյն Պետրոսի աւանդեալ է 'ի Տեառ-
« նէ մերմէ Քրիստոսէ լիուլի իշխանութիւն արա-
« ծելոյ, ուղղելոյ և կառավարելոյ զընդհանուր Ե-
« կեղեցին. որպէս նաեւ 'ի գործս Տիեզերական
« Ժողովոց և 'ի սուրբ կանոնս բովանդակի։

« Նորոգելով և եւս զաւանդեալն 'ի կանոնս
« կարգ այլոց Յարգելի Պատրիարքաց, որպէս զի
« Պատրիարքն Կ. Պոլսի երկրորդ եղիցի զկը-
« նի Ս. մենասուրբ Քահանայապետին Հռովմայ,
« և երրորդ Աղեքսանդրիոյն, և չորրորդ Անտիո-
« քայն, և հինգերորդ Երուսաղէմին, պահմամբ

« իմա՝ արտօնութեանցն ամենայնի և իրաւանց իւր-
« եանց։ Տուեալ 'ի Փլորենտիա 'ի հրապարակական
« նստի հռչակելոյ 'ի մեծի Եկեղեցւոջ, յամի հա-
« զարերորդի չորեքհարիւրերորդի երեսներորդի
« իններորդի, յառաջին աւուր Նոնայց Յուլիսի
« (7 յուլիսի), յիններորդ ամի Քահանայապետու-
« թեան Մերոյ »։

Անմիջապէս կուգան Յունաց կայսեր, Աղեք-
սանդրիոյ, Անտիոքայ, և Երուսաղէմի Պատրիարք-
ներուն Տեղապահայ և 14 Յոյն Մետրոպոլտայ, և
նաեւ 10 Սւադ Եկեղեցականաց Յունաց ստորագ-
րութիւնները։

Իսկ Կ. Պոլսի Պատրիարքը իբր ամիս մը առաջ
վախճանելով՝ չի կրցաւ սոյն սիւնհոդոսական վճռոյն
իր ստորագրութիւնը դնել, բայց մահուանէն ա-
ռաջ գրով աւանդեց իր դաւանութիւնը հետեւեալ
կերպով. « Յովսէփ ողորմութեամբն Աստուծոյ Սրբ-
« եպիսկոպոս, եւայլն։ Որովհետեւ 'ի վախճան կենաց
« իմոց ժամանեցի, և պատրաստեալ եմ վճարել
« զհասարակաց պարտս, չնորհիւն Աստուծոյ գրեմ
« և ստորագրեմ զյայսանի վճիռ իմ որդւոց իմոց։
« Սրդ՝ զամենայն զորս իմանայ և հաւատայ Կա-
« թողիկէ և Առաքելական Եկեղեցի Տեառն մերոյ
« Յիսուսի Քրիստոսի հնոյն Հռովմայ, ես իսկ հա-
« մաձայն դտանիմ, և ընդդրկելով զայնս տամ
« և ասեմ. խոստովանիմ և ես եթէ Պապն հնոյն
« Հռովմայ է Ամենելջանիկ Հայրն Հարանց, Ամե-
« նամեծ Քահանայապետ, և Փոխանորդ Տեառն

« մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ստուգութիւն հաւա-
« ատոց ամենեցուն. և զքաւարան հոգւոց։ Յորոյ
« 'ի հաւատս ստորագրեցաւ յԺ. աւուր Յունիսի յամի
« 1439. 'ի Բ. Ընդիկտիանին »։

Գերը. Գաղանճեան աղէկ մը նկատէ և նոյն
ընդ նոյն կը տեսնէ որ Ժողովքին վճռոյն մէջ չկայ
ամենեւին իր երաղած « փոխադարձ դաշնադրու-
թիւնը ». որով Պապը և Սրեւելեան Պատրիարք-
քունք « փոփոխակի » մէկզմէկու հետ կապուելն՝
իրարու իշխանութիւն ճանչնալով. այլ ընդ հակա-
ռակն Հռովմայ Քահանայապետն իբր Գերագոյն
Գլուխ եկեղեցւոյ յետ վարդապետական մասը վճռ-
ելուն, կը յաւելու ՆՈՐՈԳԵԼ կանոնաց մէջ ա-
ւանդուած Պատրիարքաց կարգն ալ՝ ամեն մէկը
իր արտօնութիւններով և իրաւունքներով՝ որպէս
զի իրենց առ կարգը առիթ առնելով մէկը միւսին
վրա առաւելութիւն մը չի պահանջէ։ Եւ Յոյնք (ոչ
-բէ-ելեն եկեղեցի յարգելումը միայն իրենց կը վե-
րագրեին) Յոյնք կըսեմ՝ իրենց Ինքնակալովը,
Պատրիարքներովը (Կ. Պոլսի, Աղեքսանդրիոյ, Ան-
տիոքայ և Երուսաղէմի), Մետրոպոլիտներովը և
սւադ կղերականօքը կընդունին սիրով և կըստո-
րագրեն հաճութեամբ. ինչպէս կը տեսնուի ստո-
րագրութեանց մէջ « հաճութեամբ ստորագրեցի »։

Յունաց միութիւնը այսպէս յաջողութեամբ 'ի
դլուխ ելլելն եւեւ՝ Ժողովքին վերջերը հասան
նաեւ Հայոց Պատդամաւորները, և « զկնի բազ-
մօրեայ քննութեան և խօսակից լինելոյ ընդ մի-

մեանս և յետ ոչ սակաւ տեսութեան վկայութեանց Աստուածային գրոց, և սրբոց հարց և վարդապետաց եկեղեցւոյ», ամենայն յօժարութեամբ ընդունեցան Փլորենտեան վճիռը (զոր առաջ յիշեցի), նոյնպէս 'ի մասնաւորի Հայոց համար տրուած Սահմանադրութիւնը՝ որ հաւատոյ վարդապետութեան և եկեղեցական բարեկարգութեան վերաբերեալ ութ յօդուած կը բովանդակէր։ Ընդունելութեան ձեւը Հայոց Պատգամաւորք ինքնին յօրինեցին Հայերէն լեզուաւ, և Լատիներէնի թարգմանուելով՝ Ներսէս թարգմանի Հայերէնը և Հ. Բարսեղ Լատիներէնը ընթերցան ժողովքին մէջ որ և կը բովանդակէր վերը յիշուած Սահմանադրութիւնը և միանդամայն Փլորենտեան Միւնհոդոսական վճիռը. կը դնենք հոս ամբողջ յիշեալ բովանդակութեան վերջաւորութիւնը, որ է այս. «Արդ մեք պատգամաւորքս՝ յանուն մեր և յանուն մեծի Կաթողիկոսին մերոյ և ամենայն Հայոց, որպէս և Սրբութիւնդ Ձեր վկայէ 'ի կոնդակի անդ, զայս փրկաւէտ սահման Միւնհոդոսական՝ հանդերձ բովանդակ մասամբքն նորին և բացատրութեամբքն, որոշողութեամբքն, աւանդութեամբքն, պատուիրանօք և կարգաւորութեամբ, և զգրեալն 'ի նմա զվարդապետութիւն ողջոյն, ևս և զոր միանգամ ունի և ուսուցանէ Սուրբ Աթոռն Առաքելական՝ և Եկեղեցի Հռովմէական, ամենայն յարգութեամբ և հպատակութեամբ յանձն առեալ ընդունիմք և ողջագուրեմք։ Եւ ևս զայնոսիկ

«վարդապետս և զսուրբ հարս՝ զորս ընդունի «Հռովմէական Եկեղեցի, յարգութեամբ ընդունի«նիմք. իսկ զայնոսիկ անձինս և զայլ ինչ զոր մի«անդամ նա ինքն Հռովմէական Եկեղեցին հերքէ «և դատապարտէ, և մեք զայնպիսիսն իբրև հեր«քեալս և դատապարտեալս համարիմք. յանձն առ«եալ իբրև զճշմարիտ որդիս հնազանդութեան՝ ընծայել զհաւատարիմ հպատակութիւն սահմանադ«րութեանց և հրամանաց նորին Առաքելական Աթոռոյ»։ (առ Զամչեանի պատմ. Հայ. հա. Գ. եր. 481)։ Ցիշատակուած Կաթողիկոսն է Կոստանդին Ե. Վահկեցի, և պատգամաւորներն են Սարգիս վարդապետ Արքեպիսկոպոս Հայոց 'ի Կափա (Թէոդ Խրիմու), Յովակիմ Եպիսկոպոս Բերիոյ, Մարկոս վարդապետ և Թովմաս վարդապետ։

Նոյնպէս Ատրի Յակոբիկեանց և Մարոնեացմէ և Եթովպիոյ ինքնակալին կողմանէ ալ պատգամաւորներ եկան և Ժողովքին վճիռը յարգանօք և հպատակութեամբ ընդունեցան։

Ասոնք ամենը այսպէս ըլլալով՝ ի՞նչ համարձակութեամբ անդիէն Սուքիաս մը մէջ ելլէ, և 'ի դիմաց բոլոր Արեւելեան ուղղափառ Եկեղեցեաց կաղաղակէ, Քահանայապետական կոնդակ մը՝ թէ չափաւորէ և թէ ընդարձակէ Արեւելեան Եկեղեցւոյ իրաւունքները, մի օրինակ պիտի մերժուի Արեւելեան Եկեղեցիէն, վասն զի այսպիսի սկզբունք մը բնաւ ընդունելի չէ եղած Արեւելեան Եկեղեցիէն։ Եւ ո՞րն է արդեօք այդ արեւելեան

եկեղեցին. մինչդեռ թո՛ղ այնչափ հին և նոր օրի-
նակները և վկայութիւնները, ահա նաեւ մեծա-
հրաչակ կերպով մը Փլորենտեան Հարք (Լատինք,
Հայք, Յոյնք, Ասորիք, Մարոնիք և Եթովպայիք)
կընդունին հաճութեամբ որ՝ Հռովմայ քահանայա-
պետը կատարեալ իշխանութիւն ընդունած է՝ի Յի-
սուսէ Քրիստոսէ արածելու, ուղղելու, և կառա-
վարելու Արեւելից Եկեղեցիներն ալ. եւս և իշխա-
նութիւն ունի նորոգելու նաեւ գլխաւոր Պատրի-
արքական Աթոռոց կարգը։ Ուստի եթէ «Արեւել-
եան» ըսելով՝ Արեւելքի մէջ գտնուած արդեամբք
ուղղափառ Եկեղեցիները կուզէ իմանալ, կ'ապա-
հովցնենք զինքը որ՝ի պատրանս կը գտնուի. ինչու
որ անոնք ոչ երբէք մերժեր են, կը մերժեն և պի-
տի մերժեն այդ սկզբունքը, թէ = Հռովմայ Քա-
հանայապետը նաեւ Արեւելեան Ծիսի Եկեղեցեաց
վրա ունի լիուլի իշխանութիւն եւս և ան բանե-
րուն մէջ՝ որ կը պատկանին քարեկարգութեան և
կառավարութեան Եկեղեցւոյ։ Արդէն չեն ալ
կրնար մերժել զայն՝ առանց դադրելու = Ուղղա-
փառ = ըլլալէն։ Մանաւանդ թէ կընդունին և կը
դաւանին՝ որ Հռովմայ Քահանայապետը իշխանու-
թիւն ունի ընդարձակել և սեղմել, աւելցնել և
չափաւորել եւս և Արեւելեան Ծիսի Պատրիարքաց
արտօնութիւնները և իրաւունքները, և Անոր (Քա-
հանայապետին) նաեւ այսպիսի օրինացը ճշմարիտ
հնազանդութեամբ հպատակեր են՝ի սկզբանէ ան-
տի։ Ուստի և ոչ երբէք կ'ընդունին ան մնալար վար-

դապետութիւնները և սկզբունքները զոյս ինքք կը
ճգնի արեւելեան ըսած եկեղեցւոյն վերադրել.
այլ ընդ հակառակն քայլ՝ի քայլ կը խորշին, կը
մերժեն և կը դատապարտեն իր և իրենց՝ Եկեղեցւոյ հակառակ հանած սկզբունքները և ը-
րած գործքերը.

Զի՞ թէ որ Արեւելեան ըսելով իրենց հնաբուած
Դոր եկեղեցի կիմանայ՝ արդէն մենք ալ համաձուած
ենք որ՝ անկա՞ իր քաղաքրաձին պէս կը ճանչնայ
Հռովմայ Քահանայապետին գլխաւորութիւնը, և
ոչ ըստ Ուղղափառաց։ Եւ ստուգիւ գիտցած ըլ-
լայ Գերբ. Սուքիաս որ՝ ահա ասոր համար խսկ՚դա-
տապարտուելոյն իրենք և մերժելոյն յՈւղղափառ
Եկեղեցւոյ։ Որովհետեւ զՔահանայապետն Հռով-
մայ կը ճանչնան և կը պատուեն դոյն իբր Պապ և
իբր ընդհանուր Եկեղեցւոյ Նախագահ. այլ ոչ և
ճշմարիտ Փոխանորդ Քրիստոսի, Գլուխ՚ համօրէն
Եկեղեցւոյ, Հայր և Վարդապետ ամենայն Քրիս-
տոնէից, և՝ի Յիսուսէ Քրիստոսէ աւանդեալ լիու-
լի իշխանութեամբ Հովիւ, Ուղղիչ և Կառավար
ընդհանուր Եկեղեցւոյ, Ինչպէս՚ Կուսուցանէ՚ Յոյն
Փլորենտեան Ժողովքին մեծահռչակ վճիռը։ Որով-
հետեւ իրենց անմիջական նաեւ իրաւական գլուխ
կը ճանչնան իրեն Արեւելեան Աթոռոց Պատրի-
արքները, և հետեւաբար կուրանան Հռովմայ Քա-
հանայապետին նաեւ Արեւելքի վրա ունեցած կար-
գաւոր իրաւաբանութեան իշխանութիւնը՝ որ թէ
Եպիսկոպոսական է, թէ՝ անմիջական. ինչպէս կը

ոորվեցնել Վատիկանեան Տիեզերական Ժողովը։ Որովհետեւ ուրացան նոյն Քահանայապետին նաեւ Արեւելեան Եկեղեցեաց վրա ունեցած իշխանութիւնը՝ ան բաներուն մէջ իսկ՝ որ բարեկարգութեան և եկեղեցական կառավարութեան կը վերաբերին. և էական տարբերութիւն դրին կախման եղանակին մէջ։ Որովհետեւ ուրացան թէ կը պարտադրին պարտաւորութեամբ նուիրապետական ստորակարգութեան և ճշմարիտ հնազանդութեան առ յիշատակեալ իշխանութիւն Քահանայապետին Հռովմայ, և կերպական անհնազանդութեամբ և յայտնի ապստամբութեամբ մերժեցին և անարգեցին Քահանայապետական Սահմանադրութիւնները, Առաքելական նամակները եւայլն։ Եւ դարձեալ Ուղղափառ եմ ըսողի մը կը վայելէ՞ արդեօք այն դառն և նախատական ոճը՝ զոր կը գործածէ Գեր. Գաղանճեան ընդդէմ Եկեղեցւոյն Հռովմայ, զրպարտելով զանիկա իբր հեղինակ բռնական զեղծմանց, իբր հարստահարիչ, իբր ուրիշին իրաւանց վրա յանկրաւի յարձակող եւայլն, եւայլն։ Ո՞ր սաեն ճշմարիտ ուղղափառ մը սա կերպ լեզու բանեցուցեր է։ Անշուշտ դիտէ ինքը Սուրբ Գրոց պատուէրը թէ « զիշխան ժողովրդեան քո մի՛ հայհոյեսցես » (Ելից. ԻԲ. 28)։ Նոյնպէս դիտէ անշուշտ թէ 'ի սկզբանէ անտի ամենայն ուղղափառք մեծ և փոքր որպիսի յարգական եղանակաւ և պատկառանօք կը վարուէին Հռովմայ Աթոռոյն հետ։ Նախնիք իրենց նուիրական պարտք մը կը համարէին, թէ Հռով-

մայ Սուրբ Եկեղեցւոյն վրայ պէտք է մեծարանօք և պատշաճ ակնածութեամբ խօսիլ, և ո՛չ երբէք յանդուգն վճիռ կարել Հռովմայ Քահանայապետայ վրա։ Քիչ մը առաջ տեսանք նաեւ մերնախնեաց դեղեցիկ և օրինակ առնելիք վարմունքը Փլորենտեան Ժողովին մէջ (ասկից 432 տարի առաջ)։ Բայց թէ որ սատեցմով չի դոհանար Գեր. Սուքիասն. յիշենք իրեն ինքերորդ դարուն մէջ Արեւելք դումարուած Ը. Տիեզերական Ժողովին կանոններէն սաստիկ վճիռը, որ կը յուսամ բաւական կըլլայ ըսելու պապանձեցնելու զինքը, որ է այսպէս « Սահմանեմք դարձեալ՝ մի՛ ուսմեք իշխել դիրս կամ բանս յօդել ընդդէմ Սրբոյ Քահանայապետին հնոյն Հռովմայ, հնարելով յանցանս կամ ամբաստանութիւնս և անուրեն ժողովս դումարելով, որպէս այժմիկ իսկ առաքաք Փոտ և վաղ ուրեմն Դէոսկորոս։ Եւ որ ըստ Փոտայ և ըստ Դէոսկորոսի ժպրհեցի դրով կամ բանիւ դործել ապիրատ ինչ ընդդէմ Աթոռոյ Առաքելապետին Պետրոսի, զնոյն նզովս զոր նոքայն ընկալան՝ ընկալցի »։

Մինչեւ ցայս վայր յիշուած անդիմադրելի վաստիւք՝ ցրելով Գեր. Սուքիասին խարխուլ չինուածքը՝ զոր ինքնահնար փլորենտեան դաշնակցութեան մը վրա ուզեր էր հաստատել. վերջին անդամ կը հարցնենք իրեն՝ թէ ինչո՞ւ համար այնպէս այլայլեր, կրճատեր, փոփոխեր և խանդարեր է Տիեզերական Փլորենտեան Ժողովին վճիռը և անոր լ-

մեռաւոր։ Ի՞նչ պիտոր պատասխանէ։ Ուրիշ բան չէ անշուշտ, բայց եթէ նոյնը, զոր երբեմն ուրիշ Ան-տիոքայ եպիսկոպոս մը Մակար անուն պատասխա-նեց եօթնեերորդ դարուն վերջերը Զ. Տիեզերական ժողովքին մէջ, թէ « Ես զայն բանս միայն ժողո-« վեցի 'ի դրոց հարց (իսկ Գեր. Սուքիաս 'ի Ժողո-վոյն Փլորենտիոյ), որք իմոց խորհրդոց և կար-« ծեաց օգնականք էին »։ Առ որ՝ կը պատասխանենք մենք ալ ժողովքին ուղղը հարց հետ՝ թէ « Զէ վա-« յել ուղղափառաց այնպէս կրճատել և խանդա-« րել զբանս հարցն սրբոց (իսկ առ Գեր. Սուքիաս՝ և առաւել ևս զվճիռս Տիեզերական ժո-« ղովոյ), այդ գործ հերետիկոսաց է »։ Երբոր Մակար նորէն իր անհանճար խօսքը կրկնեց. « Ա-« սացի ձեզ, թէ ես կամեցեալ զիմ խորհուրդս « հաստատել այդպէս կրճատեցի զբանն »։ Բոլոր ուրբ հարք մէկ բերան աղաղակեցին. « Ահա արդ « անճամբ զանձն հերետիկոս յանդիմանեաց դա։ « Նզովեալ եղիցի այս նոր Դէսակորոս, Անիծեալ « եղիցի նորս Ապողինար։ Արժան է զդա յեպիս-« կոպոսական պատուոյն 'ի բաց մերկանալ »։ Այսպէս սաստիկ պատժոյ արժանի կը դատուէին եօթնե-երորդ դարուն մէջ անոնք՝ որ իրենց մոլար վարդա-պետութեանը յենարան մը գտնելու համար կը խան-դարէին նուիրական բնագիրները։ Իննեւտասներորդ դարուն մէջ՝ թոյլ տրուա՞ծ է արդեօք՝ նոյնը աւե-լի ծանր կերպով անպատիժ գործելու։

(ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅ ՄԸ.)

3677

1n
(129)
(45)

3560